

առ ի սա փառս յարարարդապէս չքնաղ փայլեսցին, եւ ի փառս սուրբ տանդ հոգւոց մերոց լուսաւորչին՝ երեւելի սիւն եւ մեծ նեցուկ ի սա արդիւնքն միշտ երեւեսցին: Զի մեծութիւնդ իսկ պարտի զնմանութիւն հօրդ յինքեան բերել որպէս հօրդ հարազատի մեր վեհապետին՝ զնելով զսա որպէս զվէմ գլորման եւ վէմ ապաստանի, ըստ որում վասն Տեառն ասէր Սիմօն ծերունին զի Որք տեսանենն տեսցեն եւ որք ոչ տեսանենն զսա՝ կուրասցին: Եւ զի ակն քո առատ է, վասն որոյ եւ լուսաւոր համայն քոյդ մարմին, եւ առաւել զիտես զպէտս սորա եւ զհաճոյսն ամենից բարեաց կամեցողին, եւ լսես քան զմեզ եւ եւս՝ թէ ուր որ հանդիպեցաւն Լեւր մեզ առաջնորդ՝ խնդրեալ հարկէին. եւ այժմ յԱնդրիանուպօլիս փաթրիզն Շահին, որ ի վաղու իմն ակն ածէր գալստեան սորին, կամիւր, ասէ, բոլորովիմբ ի սա յանձնել զառաջնորդութիւն մեծի քաղաքին: Բայց ըստ առակին ախորժակի որդւոյ թագաւորին՝ միտեալ ի վայելչութիւն դիմաց դստեր աղքատին, ըստ որում պերճարարոյն եւ ճոխաբուն պարզէութիւն աստուածային բանին ցանկացեալ գեղարուն գեղոյ հոգւոյս յինքենէ փրչմամբ շնորհին տնանկացելոյ բնութեանս աղքատի՝ վասն ստունգանելոյ երբեմն ի դրախտին, որոյ ըզձայր թագաւորն անկարօտ եւ մարգարէն Եսէածին, աղերսելով զօգնութիւն ի Փրկչէն թէ Ես աղքատ եմ եւ տնանկ եւ մի՛ յամենար ասելով կողկողէր կրկին: Որ մարդասիրաբար տնտեսեաց զհրաշս զանբաւելին, զոր ետ ի վերնատունն սրբոց առաքելոցն ասելով՝ Առէք զսուրբ Հոգին, ըստ նոյն նախագուշակողին թէ Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արգարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին: Եւ բազում թագաւորք եւ կաթողիկոսունք սիրեցելոցն իւրեանց քաղաքաց պատիւս աալով այլ իմն կերպիւ